ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունվարի 2022թ. թիվ 2-Ա

Ա.ԳՈՐԳԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Անահիտ Արկադիի Գորգինյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2017 թվականի մարտի 6-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի մարտի 6-ը ներառյալ:

2. Ա.Գորգինյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 7-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

1/3/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. հունվարի 3
ք.Վանաձոր